ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Կենգուրու 2026

Կանոններում գործածվող հիմնական եզրույթներ և հասկացություններ

Սույն կանոններում գործածվող հիմնական եզրույթներն ու հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ:

- «Քոնթեստս Լաբ» կրթական հասարակական կազմակերպություն – Մրցույթի բացառիկ կազմակերպիչը Հայաստանում ((096) 86-80-11, kangaroo@contests.am, www.contests.am):
- «Կենգուրու առանց սահմանների» միջազգային ընկերակցություն (KSF) – Կազմակերպիչը ողջ աշխարհում (կենտրոնական գրասենյակը գտնվում է Փարիզում, www.aksf.org):
- Կրթական կառույց – «Կենգուրու» մրցույթի մասնակցի հանրակրթական հաստատություն (դպրոց, կրթահամալիր, քոլեջ և այլն):
- Մրցույթի պատասխանատու ուսումնական հաստատությունում – Կրթական կառույցի կողմից լիազորված աշխատակից, որը կհամակարգի մրցույթի կազմակերպման հետ կապված բոլոր աշխատանքները (իրազեկել մասնակիցներին մրցույթի անցկացման հաջորդական գործընթացների մասին): «Քոնթեստս Լաբ»-ի համակարգողները կապ կպահպանեն անմիջապես մրցույթի պատասխանատուի հետ:
- Մասնակիցներ – Դպրոցի 3-12-րդ դասարանցիներ, միջին մասնագիտական ուղղվածությամբ քոլեջների 1-3 կուրսի ուսանողներ, որոնք մինչև հայտարարված վերջնաժամկետը գրանցվել են մրցույթի առցանց հարթակում՝ ա) կցելով անդորրագրի նիշքը (բանկում կամ տերմինալով վճարած կտրոնի նկարը), բ) առցանց վճարելով մասնակցության համար:
- Մրցանակներ – Արդյունքների ամփոփումից հետո բոլոր մասնակիցներն էլ.փոստով ստանում են մասնակցության էլեկտրոնային հավաստագրեր, որ փաստում են վաստակած միավորը, իսկ մրցանակակիրներին շնորհվում են խրախուսական մրցանակներ: Մրցույթի մասնակիցների դպրոցները ստանում են մասնակցության հավաստագիր (էլեկտրոնային):
- Մրցույթի մրցանակակիրներ – Մրցանակակիր ճանաչվում են մրցույթի բոլոր փուլերին (հիմնական, լրացուցիչ, հաղթողի) հաջորդաբար մասնակցած և շեմը հաղթահարած մասնակիցները: Մրցույթի բոլոր փուլերի ամփոփման ընթացքում որոշվում են երկու կարգի մրցանակակիրներ՝ հաղթող (3-4-րդ դասարանցիներ, ովքեր թեստային փուլ(եր)ում հավաքել են 96 միավոր, կամ 5-12-րդ դասարանցիներ, ովքեր՝ հավաքել են 120 միավոր, իսկ հարցազրույցին նրանք բոլորն ունեցել են 100% արդյունք), և լավագույն (3-4-րդ դասարանցիներ, ովքեր թեստային փուլ(եր)ում հավաքել են 91-93 միավոր, կամ 5-12-րդ դասարանցիներ, ովքեր՝ հավաքել են 115- 117 միավոր):
- Մրցութային փաթեթ – Տվյալ տարվա թեստային առաջադրանքների տարբերակներ՝ նախատեսված հինգ տարիքային խմբերի համար: Մրցույթի օրն առցանց հարթակ մուտք գործած յուրաքանչյուր մասնակցի համար մրցույթի մեկնարկից հետո հասանելի են լինում միայն իր տարիքային խմբի համար նախատեսված առաջադրանքները: Բոլոր տարիքային խմբերի առաջադրանքները չկրկնվող են:
- Դպրոցի ծածկագիր – Դպրոցին «Քոնթեստս Լաբ»-ի կողմից շնորհվող թվային անփոփոխ ծածկագիր (բոլոր տարիների համար), որը կարող եք գտնել www.contests.am կայքում կամ իմանալ մարզային համակարգողներից: Այս ծածկագիրը պետք է լրացնել տերմինալներով վճարում կատարելու ժամանակ:
- Մրցույթի առցանց հարթակ – Առցանց հարթակ (https://test.contests.am/hy), որտեղ անցկացվում է մրցույթը: Մրցույթին մասնակցելու համար վճարում կատարած աշակերտներն այս հարթակում գրանցվում են, մուտք գործում համակարգ, մասնակցում մրցույթին, թեստը լրացնում՝ նշելով

յուրաքանչյուր հարցի համար առաջարկվող 5 պատասխաններից նախընտրելի ճիշտ տարբերակը, ավարտված աշխատանքը հաստատում և ուղարկում ստուգման:

- Հարթակում գրանցման երկու տարբերակ կա՝

- Տարբերակ 1. Վճարման անդորրագիր կցելով – Եթե վճարումը կատարել եք բանկում կամ տերմինալով:
- Տարբերակ 2. Առցանց վճարում կատարելով - Եթե վճարումը կատարելու եք «Իդրամի» կամ բանկային քարտի միջոցով:
- Գրանցվելու համար կարող եք դիտել այս ուղեցույցները.
  - Հարթակում գրանցվելու համար (առցանց վճարում կատարելով)՝
  - «Իդրամով» վճարելիս՝ https://youtu.be/zMcRrSpGI8k
  - Բանկային քարտով վճարելիս՝ https://youtu.be/zMcRrSpGI8k
  - Հարթակում գրանցվելու համար (կտրոնը կցելով)՝ https://youtu.be/kZnnfnwpUo4
  - Եթե արդեն ունեք գրանցում նախորդ մրցույթներից, ապա
  - պետք է մուտք գործել հաշիվ և պրոֆիլից փոխել մրցույթը ըստ այս ուղեցույցի՝
    https://youtu.be/XLDj9uhX724
    այնուհետև կատարել վճարում՝
    1. կամ առցանց որևէ վճարման միջոցով՝ բանկային քարտով կամ «Իդրամի» միջոցով,
    2. կամ պետք է նախապես վճարած կտրոնի նկարը ուղարկել kangaroo@contests.am էլ. հասցեին:

1. Մրցույթի մասնակիցները

1.1. Մրցույթի հիմնական նպատակը դպրոցականների ամենալայն շրջանում մաթեմատիկայի հանդեպ հետաքրքրության խթանումն է, ուստի մրցույթին կարող են մասնակցել 3-12-րդ դասարանցի կամ քոլեջների 1-3 կուրսի բոլոր ցանկացողները: Մրցույթի խնդիրների տարբերակները բաժանված են ըստ հինգ տարիքային խմբերի՝ 3-4-րդ, 5-6-րդ, 7-8-րդ, 9-10-րդ և 11-12-րդ դասարաններ: Որևէ նախնական ընտրություն կատարելը, որևէ աշակերտի կամքին հակառակ նրան մրցույթին մասնակցելուց զրկելը կամ որևէ կերպով նրա մասնակցությանը խոչընդոտելը դեմ են «Կենգուրու» մրցույթի սկզբունքներին և անընդունելի են:

1.2. Ովքեր կարող են մասնակցել մրցույթին

- Սահմանված ժամկետում մրցույթի հարթակում գրանցված և վճարումը սահմանված կարգով կատարած 3-12-րդ դասարանների աշակերտները, քոլեջների 1-3 կուրսի ուսանողները:

2. Մրցույթի անցկացումը

2.1. Հայաստանում մրցույթի բացառիկ կազմակերպիչը «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն է:

2.2. Մրցույթի կազմակերպման աշխատանքներում ներգրավված են «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ- ի, համակարգողները և մասնակից կրթական կառույցները (դպրոցներ, քոլեջներ և այլն): Յուրաքանչյուր մասնակից կառույց նշանակում է մրցույթի պատասխանատուին, որը համակարգում է մրցույթի կազմակերպման աշխատանքները (աշակերտների տեղեկացում մրցույթի մասին):

2.3. Յուրաքանչյուր մասնակից աշակերտ (անկախ մրցույթի արդյունքներից) և մասնակից կրթական կառույց ստանում է մասնակցության էլեկտրոնային հավաստագիր:

2.4. «Կենգուրու 2026» մրցույթը կանցկացվի 2026 թ.-ին՝ հետևյալ ժամանակացույցով

Մարտի 29-ին՝

3-4-րդ դասարաններ՝ ժամը 16:00-ից 18:00

7-8-րդ դասարաններ՝ ժամը 16:00-ից 18:00

5-6-րդ դասարաններ՝ ժամը 11:30-ից 13:00

9-12-րդ դասարաններ՝ ժամը 11:30-ից 13:00

2.5. Մրցույթն անցկացվում է առցանց՝ https://test.contests.am/hy հարթակում: Մասնակիցները գրանցվում են անհատական էլ. հասցեով, ստեղծում են գաղտնաբառ:

*Լրացված տվյալների ճշգրտությունը, դրանք հիշելը և ճիշտ կիրառելը մրցույթի ժամանակ անխափան մուտքի և մասնակցության գրավականներից են:

- Եթե մասնակիցը մասնակցել է «Մեղու 2024», «Մեղու 2025», «Կենգուրու 2025», «Ռուսական արջուկ 2024» կամ «Ռուսական արջուկ 2025» մրցույթներից որևէ մեկին և արդեն հարթակում ունի հաշիվ, ապա ևս մեկ անգամ գրանցման անհրաժեշտություն չկա: Այս դեպքում պետք է մուտք գործել հաշիվ, պրոֆիլում կատարել տվյալների թարմացում և պահպանում, ընտրելով «Կենգուրու» մրցույթը, կատարել վճարում բանկային քարտով կամ «Իդրամ» հավելվածով:

- Եթե մասնակիցն ունի նախապես մեկ այլ մրցույթի համար գրանցաց օգտահաշիվ, իսկ մասնակցության համար վճարում կատարվել է բանկում կամ տերմինալով, ապա պետք է մուտք գործել հաշիվ, թարմացնել տվյալները, վճարման թղթային անդորրագրի նկարն ուղարկել kangaroo@contests.am էլ. հասցեին, նամակում նշել մասնակցի տվյալները (անուն- ազգանուն-հայրանուն, դպրոց, դասարան, գրանցման էլ. հասցե) և գրել, որ հաշիվն ակտիվացնելու կարիք կա, նման դեպքում հաշիվն ակտիվացնում են մրցույթի կազմակերպիչները:

- Եթե մասնակիցը չունի գրանցում, ապա համացանցին հասանելիություն ունեցող որևէ թվային սարքի միջոցով (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) գրանցվում է հարթակում՝ սեղմելով «Գրանցում» կոճակը, հաջորդական քայլերով ընտրում կամ լրացնում պահանջվող տվյալները: Համապատասխան դաշտերում ըստ հերթականության պետք է ընտրել մարզը, համայնքը, կրթական հաստատությունը, դասարանը, սեռը: Մնացած տվյալները պետք է լրացնել մուտքագրելով, դրանք են՝ մասնակից աշակերտի անուն-ազգանունը, գործող էլ. փոստի հասցեն, ծննդյան վկայականի համարը (անհրաժեշտ է մասնակցին անհատականացնելու համար), հեռախոսահամարը, որին կարճ հաղորդագրությամբ ուղարկվում է վավերացման կոդը, գաղտնաբառը (սա պետք է հիշել ամենայն ճշգրտությամբ, որպեսզի մրցույթի օրը մուտք գործելիս խնդիրներ չառաջանան): Անուն-ազգանունը պետք է լրացնել հայատառ և ճիշտ, որպեսզի մասնակցության հավաստագիրը տրվի ճիշտ տվյալներով:

- Եթե գրանցում կատարելիս լրացման դաշտերի մոտ կարմիրով նշվում է, որ այդ տվյալներով արդեն կա գրանցում, ապա մասնակիցը արդեն իսկ ունի հաշիվ և կարող է պարզապես մուտք գործել՝ լրացնելով էլեկտրոնային հասցեն և գաղտնաբառը: Եթե մոռացել եք մուտքային տվյալները, ճշտելու համար կապվեք Մրցույթների բաժնի հետ:

2.6. Մրցույթի օրը մասնակիցները պետք է մուտք գործեն հարթակ, որտեղ նշված ժամին հասանելի կլինեն առաջադրանքները: Մրցույթի ընթացքում մասնակիցը պետք է մենակ լինի սենյակում: Եթե դա անհնար է, ապա ընտանիքի անդամները պետք է պահպանեն լռություն, չմիջամտեն, չխանգարեն մասնակցին ինքնուրույն աշխատել: Հիշեցնենք, որ մրցույթի հեղինակությունն ու արդյունքների ճշտությունը կախված են մրցույթի անցկացման պատշաճությունից: Նախքան մրցույթը հարթակում ակտիվ կլինեն միայն փորձնական թեստեր նախորդ տարիների մրցութային առաջադրանքներով, ինչը հնարավորություն կտա հարթակում գրանցված և մուտք գործած օգտատիրոջը հասկանալու մրցույթի առաջադրանքի կառուցվածքը, նրա հետ աշխատելու սկզբունքները և որոշակիորեն հմտանալու:

2.7. Մրցույթին նույն ընտանիքից մեկից ավելի երեխաների մասնակցության դեպքում նրանք պետք է օգտվեն տարբեր սարքերից, մուտք գործեն հարթակ անհատական հաշիվներով, աշխատեն ինքնուրույն, խուսափեն խորհրդակցելուց, միմյանց չխանգարեն: Խիստ ցանկալի է, որ նրանք գտնվեն տարբեր սենյակներում:

2.8. Մրցույթի ժամանակ մասնակիցը սևագրության համար կարող է օգտագործել մաքուր թուղթ: Արգելվում է օգտվել ցանկացած հաշվիչ սարքից: Մրցույթի ժամանակ ցանկալի է չծանրաբեռնել համացանցային կապը այդ պահին ոչ հրատապ այլ գործողություններով: Օրինակ՝ երբ մասնակիցը լրացնում է թեստը, ցանկալի է այդ ընթացքում չնայել առցանց ֆիլմ կամ տեսահոլովակ, չխաղալ առցանց խաղեր և չանել այլ գործողություններ, որոնք կարող են խափանել կամ դանդաղեցնել համացանցային կապը:

2.9. Մրցույթի ընթացքում նույն մասնակցի տվյալներով չի կարելի հարթակ մուտք գործել մեկից ավելի թվային սարքով, այլապես համակարգը դրանք կասկածելի է համարում և մասնակցի աշխատանքը խափանում: Մրցույթի 75 րոպեների ընթացքում պարտադիր է ինքնուրույն աշխատելու համար անհրաժեշտ պայմանների և անխափան ինտերնետային կապի ապահովումը: Հուշումները, այլ աղբյուրներից (ներառյալ համացանցային) օգտվելը, միջամտությունները, խոսելն ու քննարկումները խստիվ արգելվում են:

2.10. Մրցույթի կանոնները զետեղված են հարթակում, և գրանցվելիս պետք է ծանոթանալ դրանց բովանդակությանը ու հաստատել դա: Մրցույթի առաջադրանքների լուծման համար հատկացվում է ուղիղ 75 րոպե: Այս ժամանակը հաշվարկվում է հարթակում առաջադրանքները մասնակիցների համար ակտիվացնելու պահից: 75 րոպե հետո մրցույթն ավարտվում է, և թեստը դառնում է անհասանելի, իսկ մասնակցի կողմից նշված պատասխանները պահպանվում են և ուղարկվում հետագա ստուգման:

2.11. Հարթակում գրանցվելիս որպես օգտանուն պետք է ճշգրիտ մուտքագրել գործող էլ. փոստի հասցե, որն էլ հետագայում էլեկտրոնային նամակագրության միջոց է դառնում «Քոնթեստս լաբ» ՀԿ- ի և տվյալ մասնակցի միջև:

Հարթակում նախապես գրանցված և մուտք գործած մասնակիցը մրցույթի
մեկնարկի ժամին, «Թեստեր» ենթագրից ակտիվացնելով «Անցնել թեստը» հրահանգը, ստանում է հնարավորություն թեստային առաջադրանքները
լուծելու: Այդ պահից հաշվարկվում է մրցույթի ժամանակը՝ 75 րոպե:

2.12. Երբ մասնակիցը հարթակում ակտիվացնում է «Անցնել թեստը» հրահանգը, էկրանի վերևում սկսում է 75 րոպեի հետհաշվարկը, ինչը մասնակցին հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կառավարել իր ժամանակը:

2.13. Յուրաքանչյուր առաջադրանք ունի պատասխանի հինգ տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Լուծելով առաջադրանքը՝ մասնակիցը նշում է տվյալ առաջադրանքի ներքևում առկա պատասխանի 5 տարբերակներից մեկը: Եթե որևէ առաջադրանքի պատասխաններից մասնակիցը չի նշում ոչ մեկը, ապա առաջադրանքը համարվում է չլուծված: Չլուծված առաջադրանքի համար միավոր չի հանվում:

2.14. Թեստը մասնակցին հասանելի դառնալուց 75 րոպե հետո մրցույթն ավարտվում է, և թեստը փակվում է: Մասնակցի ընտրած պատասխանները պահպանվում են: Եթե ինչ-որ պահից սկսած մասնակցի մոտ լինում են կապի խափանումներ, ապա մինչ այդ նրա կողմից լրացված պատասխանները պահպանվում են հարթակում: Կապի վերականգնումից հետո նա կարող է վերադառնալ համակարգ, սակայն այդ դեպքում նա կորցրած կլինի թեստի համար հատկացված ժամանակը կամ դրա մի մասը:

2.15. Թեստի ավարտին մասնակցի մոտ երևում է նախնական արդյունք: Սակայն այն վերջնական արդյունք չէ: Բոլոր աշխատանքները ելքագրվում են հարթակից և ստուգվում հատուկ ծրագրով, որն էլ հաշվարկում է վերջնական միավորներ:

3. Արդյունքների ամփոփում

3.1. Բոլոր մասնակիցների աշխատանքները հարթակից ելքագրվում են հատուկ համակարգչային ծրագիր, որի միջոցով իրականացվում է ստուգումը: Աշխատանքների ստուգումը տևում է 14 աշխատանքային օր, որի ընթացքում ձևավորվում են ընդհանուր ցուցակներ՝ ըստ տարիքային խմբերի: Այդ ցուցակների հիման վրա կազմվում են հաշվետվություններ, որոնք հետագայում ուղարկվում են մասնակից կրթական կառույցներին: Յուրաքանչյուր կրթական կառույց ստանում է հաշվետվություն միայն իր մասնակից աշակերտների ընդհանուր արդյունքների մասին:

3.2. Յուրաքանչյուր մասնակից գրանցման ժամանակ նշած էլ. հասցեին նամակ է ստանում, որով տեղեկացվում է իր վաստակած միավորի մասին: Էլ. հասցեն պետք է ճշգրիտ լինի. եթե մասնակիցը հարթակում գրանցվելիս էլ. հասցեն լրացնում ու պահպանում է վրիպակով, ապա դրա համար ինքն է պատասխանատու: Այդ դեպքում թեստի իր արդյունքները նա կարող է ուշ ստանալ, պատասխանների ստացման վերջնաժամկետից մինչև երկու ամիս ուշացմամբ:

3.3. Մրցույթի արդյունքների հավաստիության ու անկողմնակալության ապահովման համար պատասխանատու են թե՛ մասնակիցները, թե՛ կազմակերպիչները: Մասնակիցները պարտավորվում են աշխատել ինքնուրույն, առանց կողմնակի միջամտության և օգնության՝ հնարավորինս բացահայտելով սեփական ներուժը, ինչը տարեցտարի նրանց համար կապահովի այնպիսի հմտությունների զարգացում, ինչպիսին են ժամանակի ճիշտ կառավարումը և ոչ ստանդարտ խնդիրների լուծումը: Ծնողներից ու ընտանիքի մյուս անդամներից մեր պահանջն է տալ մասնակցին ինքնադրսևորվելու և զարգանալու իրական հնարավորություն: Իր հերթին «Քոնթեստս Լաբ»-ը երաշխավորում է գործընթացների կազմակերպման անաչառություն և անկողմնակալություն՝ նախևառաջ ապահովելով մրցույթի առաջադրանքների եզակիությունը և նախքան մրցույթի մեկնարկը դրանց գաղտնիությունը:

3.4. Եթե մասնակիցը ցանկանում է մրցույթի ավարտից հետո ստացվող արդյունքները բողոքարկել, պետք է ունենա իր արդյունքների հավաստիության հստակ ապացույցներ և դրանց հետ միասին դիմում ներկայացնի էլեկտրոնային նամակով kangaroo@contests.am հասցեին՝ կցելով այդ ապացույցները:

3.5. Պատասխանների համակարգչային մշակումից հետո կատարվում է տվյալ դպրոցի կամ մեկ ընտանիքից երկու և ավել մասնակցի միևնույն տարիքային խմբի բոլոր աշխատանքների ծրագրային համադրում՝ համընկնումների հայտնաբերման նպատակով: Արդյունքների ամփոփ ցանկերում համընկնող աշխատանքների կողքին կատարվում է «արտագրության կասկած» նշումը, որը համարվում է մրցույթի կանոնների կոպիտ խախտում: Բոլոր մասնակիցների արդյունքների վերլուծությունից հետո «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն որևէ կասկածի դեպքում իրավունք ունի անցկացնելու մրցույթի հավելյալ ստուգիչ փուլեր:

3.6. Ստուգման և վերլուծության արդյունքում մրցույթի կանոնների կոպիտ խախտումների բացահայտման դեպքում «Քոնթեստս Լաբ»-ն իրավասու է որակազրկելու (հանելու մասնակիցների ցուցակից կամ աշխատանքը չեղյալ համարելու առանց որևէ փոխհատուցման)

առանձին մասնակիցների: Այսպիսի որակազրկման կամ կանոնների կոպիտ խախտման վերաբերյալ «Քոնթեստս Լաբ»-ը նամակ-նախազգուշացում է ուղարկում տվյալ մասնակցին՝ խնդրելով ձեռնարկել բոլոր միջոցները՝ կանոնների խախտումներն ապագայում բացառելու համար: Նույն մասնակցին երկու տարի անընդմեջ նամակ-նախազգուշացում ուղարկելու դեպքում «Քոնթեստս Լաբ»-ը կարող է մեկ տարով չթույլատրել այդ մասնակցին մասնակցել մրցույթին:

3.7. Մրցույթի արդյունքները՝ միավորները, ուղարկվում են մասնակիցներին էլեկտրոնային նամակով, բոլոր մասնակիցներին շնորհվում են մասնակցության էլեկտրոնային հավաստագրեր: Հիմնական փուլի շեմը հաղթահարած մասնակիցների համար կազմակերպվում է հաջորդ՝ լրացուցիչ փուլը, որի արդյունքում որոշվում են Լավագույն մրցանակակիրները, նրանք ստանում են էլեկտրոնային պատվոգրեր: Հիմնական և լրացուցիչ փուլերը առավելագույն արդյունքով հաղթահարած մասնակիցները պետք է անցնեն հարցազրույց, որի ընթացքում որոշվում են մրցույթի բացարձակ հաղթողները: Մինչ արդյունքների հրապարակումը մրցույթի կազմակերպիչները իրավասու են լրացուցիչ հանդիպում (թեստավորում, հարցազրույց) անցկացնել նաև այն մասնակիցների հետ, ում արդյունքների հավաստիությունը կարիք ունի վերահաստատման: Լրացուցիչ հանդիպման արդյունքում հավանական հաղթողը հավակնում է ճանաչվելու բացարձակ հաղթող, եթե լրացուցիչ հանդիպման ընթացքում տրված բոլոր հարցերին ու խնդիրներին տվել է ճիշտ պատասխաններ: Լրացուցիչ հանդիպումների արդյունքում որոշվում են հաղթողները, ըստ անհրաժեշտության նաև լավագույն մրցանակակիրները: Վերջնական ամփոփումից հետո
«Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ի կողմից նամակ է ուղարկվում լրացուցիչ հանդիպման մասնակից աշակերտների էլ. հասցեներին: Լրացուցիչ թեստի անցկացման մասին մասնակիցը տեղեկացվում է նախապես մասնակցի էլ.հասցեին նամակի միջոցով: «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն անհրաժեշտության դեպքում կարող է մասնակցին լրացուցիչ ծանուցել հարթակում գրանցված հեռախոսահամարին sms հաղորդագրության ուղարկման միջոցով:

3.8. Բոլոր աշխատանքները պահվում են «Քոնթեստս Լաբ»-ում մրցույթի անցկացման օրից հետո 4 ամիս: Մինչև այդ պահն ընդունվում են բողոքարկման հայտեր: Բողոքարկել կարող է ծնողը կամ դպրոցը այն դեպքում, եթե մասնակցի անունը չկա արդյունքների հաշվետվությունում կամ եթե կասկածի տակ է դրվում ստուգման ճշտությունը: Առաջադրանքների բովանդակության և/կամ պատասխանների տարբերակների ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ բողոքներ չեն ընդունվում, քանի որ առաջադրանքները և դրանց պատասխանների տարբերակները մշակում և ընդունում է միջազգային մրցույթի կազմակերպիչը:

3.9. Մասնակից դպրոցների արդյունքները չեն համեմատվում: Մրցույթից մոտ մեկ ամիս հետո բոլոր դպրոցներին ուղարկվում են արդյունքների ամփոփ հաշվետվությունները, որոնցում տրվում են մասնակիցների մասին միայն ընդհանուր տեղեկություններ՝ առանց անհատական տվյալների: Հիշեցնում ենք՝ դպրոցը ստանում է տեղեկություն միայն իր աշակերտների արդյունքների վերաբերյալ:

4. Մրցանակաբաշխություն

4.1. Բոլոր մասնակիցների, մրցանակակիր հաղթողների մրցանակաբաշխությունը իրականացվում է մրցանակային ֆոնդից, որը ձևավորվում է մասնակցության վճարներից և հովանավորների միջոցներից: Բոլոր մասնակիցների համար նախատեսված են էլեկտրոնային հավաստագրեր ու էլեկտրոնային փոքրիկ հուշանվերներ:

4.2. Բոլոր լավագույն կարգի մրցանակակիրները ստանում են խրախուսական մրցանակներ և պատվոգրեր, իսկ մրցույթի հաղթողները՝ գլխավոր մրցանակ: Բոլոր մասնակից դպրոցները ստանում են մասնակցության էլեկտրոնային հավաստագրեր:

4.3. Գլխավոր մրցանակը սահմանում է «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն՝ կախված տվյալ տարվա ընդհանուր արդյունքներից և հաղթողների թվից: Գլխավոր մրցանակն արժեքավոր նվեր է կամ «Կենգուրու առանց սահմանների» ընկերակցության անդամ որևէ երկրում կազմակերպվող ամառային ճամբարի ուղեգիր: Ուղեգիրը ներառում է ճամբարում մնալու բոլոր ծախսերը, ճանապարհածախսը, ապահովագրությունը և ելքի արտոնագիրը (վիզան): Ամառային ճամբարի ուղեգիրը որպես գլխավոր մրցանակ սահմանելը որոշում է «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն՝ կախված տվյալ տարվա հաղթողների թվից, ամառային ճամբարների առաջարկից և տվյալ տարում Հայաստանին հատկացված տեղերի քանակից: Ամառային ճամբարների ուղեգրեր կարող են տրվել միայն տվյալ տարվա հունիսի 1-ի դրությամբ 12 տարեկանը բոլորած հաղթողներին, ովքեր բավարար չափով տիրապետում են անգլերենին:

5. Մասնակցության վճար

5.1. Մրցույթի մասնակցության վճարը 970 ՀՀ դրամ է: Այդ գումարն օգտագործվում է բացառապես կազմակերպչական աշխատանքների և մրցանակների համար:

5.2. Մասնակցել ցանկացողները վճարումները կատարում են ՀՀ-ում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, հաշվեհամար՝ 1570093216780100, շահառու դաշտում անհրաժեշտ է ասել, որ նշեն «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ, նպատակ դաշտում նշել մրցույթի անունը, աշակերտի տվյալները՝ աշակերտի անուն ազգանուն, դասարան, դպրոց: Վաճրման հնարավորություն կա նաև «Թելսել» (Telcell) և «Իզի Փեյ» (EasyPay) տերմինալների միջոցով: Կարելի է վճարել նաև մրցույթի հարթակում առցանց վճարման միջոցով՝ օգտվելով «Իդրամ» վճարային համակարգից կամ բանկային քարտի միջոցով: Բանկի մասնաճյուղում վճարում անելիս պետք է հայտնել վճարման նպատակը՝ մասնակցություն «Կենգուրու» մրցույթին, աշակերտի անուն-ազգանուն- հայրանունը, դասարանը, դպրոցի անվանումն ու համայնքը: Մասնակիցների համար վճարումները կատարվում են անհատական կտրոններով, խմբային վճարումներով կտրոնները չեն ընդունվում. վճարումները բանկային անդորրագրերով, «Թելսել» և «Իզի Փեյ» տերմինալներով վճարումը, ինչպես և առցանց հարթակում վճարումը քարտային փոխանցմամբ կամ «Իդրամ» հավելվածով, յուրաքանչյուր աշակերտի համար պետք է կատարել առանձին:

5.3. Մրցույթին մասնակցելու համար վճարելը բավարար չէ. աշակերտն անպայման պետք է գրանցվի մրցույթի անցկացման առցանց հարթակում և մրցույթի ժամանակ մուտք գործի որպես օգտատեր:

5.4. Եթե աշակերտը չի մասնակցել մրցույթին (վճարում կատարած լինելով հանդերձ, չի գրանցվել հարթակում և նրա լուծած առաջադրանքի պատասխանները չկան հարթակում վերբեռնված ցուցակում), ապա նա կարող է հետ պահանջել մասնակցության վճարը՝ դիմելով
«Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ն՝ մրցույթի օրից հաշված մեկ ամսվա ընթացքում: Գումարը կվերադարձվի բացառապես տվյալ աշակերտի ծնողին՝ վերջինիս դիմումի հիման վրա: Նշված ժամկետից հետո գումարը չի վերադարձվում:

6. Դպրոցի և մասնակիցների քայլերի հաջորդականություն

6.1. Դպրոցները մրցույթին մասնակցելու հրավերը ստանալուց հետո նախապատրաստվում են մրցույթին հետևյալ կերպ:

- Նշանակում են դպրոցում մրցույթի պատասխանատուին:
- Իրազեկում են աշակերտներին և նրանց ծնողներին մրցույթի և դրա անցկացման կարգի մասին՝ օգտագործելով դպրոցում կիրառվող էլեկտրոնային գործիքները (դպրոցի ֆեյսբուքյան էջ, դասարանների վերյան խմբեր, տեղեկատվության այլ միջոցներ):

- Կարիքի դեպքում ծանոթացնում են առցանց հարթակին ներգրավելով մարզային համակարգողին:

6.2. Մրցույթին մասնակցել ցանկացողները, դպրոցից կամ որևէ այլ աղբյուրից տեղեկանալով մրցույթի մեկնարկի մասին «Քոնթեստս Լաբ» կրթական ՀԿ-ի պաշտոնական հայտարարությանը, պետք է անեն ներքոբերյալը:

6.3. Եթե մասնակցել են «Մեղու 2024», «Մեղու 2025», «Կենգուրու 2025» կամ «Ռուսական արջուկ 2025» մրցույթներից որևէ մեկին, կրկնակի գրանցման կարիք չկա, արդեն առկա գրանցման տվյալներով մուտք են գործում հարթակ, պրոֆիլում ընտրում և պահպանում Կենգուրու մրցույթը, որից հետո առցանց վճարում են էջն ակտիվացնելու համար: Եթե մասնակցության համար վճարումը կատարվում է բանկում կամ տերմինալով, պետք է պրոֆիլում ընտրել և պահպանել Կենգուրու մրցույթը, որից հետո kangaroo@contests.am էլ.փոստին նամակով ուղարկել վճարման անդորրագրի նկարը կամ տեսապատճենը, բովանդակության մեջ պարտադիր գրել մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, դասարանը, դպրոցը, մարզը, համայնքը, նշել, որ վճարումը կատարված է «Կենգուրու 2026» մրցույթի համար և պետք է ակտիվացնել առկա գրանցումը:

6.4. Եթե չեն մասնակցել վերոնշյալ մրցույթներից մեկին և չունեն օգտահաշիվ և էջ, պետք է գրանցվեն մրցույթի առցանց հարթակում՝ ըստ հետևյալի.

- Մասնակցության համար վճարում կատարեն բանկում, վճարային տերմինալներով կամ առցանց բանկային համակարգով՝ սահմանված ժամկետներում (ժամկետների մասին տեղեկությունը կարելի է ստանալ դպրոցից կամ «Քոնթեստս Լաբ» ՀԿ-ից):
- Համացանցին հասանելիություն ունեցող որևէ թվային սարքով գրանցվեն մրցույթի առցանց հարթակում՝ https://test.contests.am/hy իրենց անհատական օգտահաշիվն ակտիվացնելով: Գրանցման համար մասնակիցը պետք է ունենա գործող էլ. հասցե (կարող է օգտվել ծնողի էլ. հասցեից, սակայն պետք է հաշվի առնել, որ մեկ էլ. հասցեով կարող է գրանցվել միայն մեկ մասնակից): Հետագայում գրանցման էլ. հասցեն լինելու է մասնակցի մուտքանունը, իսկ գաղտնաբառը (նվազագույնը ութ նիշ՝ լատիներեն մեծատառ և փոքրատառ, նաև թվանշան) պետք է ճշգրիտ հիշել, որ կարողանան անխափան մուտք գործել հարթակի իրենց էջը:
- Գրանցման ընթացքում համակարգն ուղղորդում է ծանոթանալու մրցույթի կանոններին և հաստատելու դրանց համաձայն լինելը:
- Գրանցման ավարտին համակարգը կարճ հաղորդագրություն (sms) է ուղարկում մասնակցի նշած հեռախոսահամարին և պահանջում է լրացնել ուղարկված կոդը:
- Եթե մասնակիցը ճիշտ է կատարել գրանցման քայլերը, գրանցման ժամանակ նշված էլ հասցեին գալիս է հաստատող նամակ և նախքան մրցույթի օրը «Թեստեր» բաժնում հասանելի են դառնում փորձնական թեստի նմուշները, որոնք կարելի է լրացնել, նշել պատասխանները և պատրաստվել մրցույթին:
- Մրցույթի օրը մինչև մրցույթի մեկնարկը հարթակում գրանցված յուրաքանչյուր մասնակից իր մուտքանունով (գրանցման էլ. հասցե) և գաղտնաբառով մուտք է գործում հարթակ:
- ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Մրցույթի ընթացքում եթե նույն մասնակիցը մեկից ավելի սարքերով է մուտք գործում, համակարգն այդ մուտքերը կասկածելի է համարում, և մասնակցի հետագա աշխատանքը հարթակում խափանվում է:

- Մրցույթի մեկնարկից հետո հարթակի «Թեստեր» բաժնում ընտրելով «Անցնել թեստը» հրահանգը՝ մասնակիցն իր էջում տեսնում է իր տարիքային խմբի առաջադրանքները. այդ պահից սկսվում է մրցութային ժամանակի՝ 75 րոպեի հետհաշվարկը:
- Թեստի հետ աշխատանքը վերջացնելուց հետո մասնակիցը սեղմում է «Հաստատել» կոճակը վերջին առաջադրանքի ներքևում, որից հետո թեստը փակվում է և այլևս հասանելի չի լինում փոփոխությունների համար: Այդ իսկ պատճառով ՉԻ ԿԱՐԵԼԻ անավարտ աշխատանքը հաստատել:
- Սակայն եթե ժամանակը սպառվել է, ինչի պատճառով թեստը նույնպես դառնում է անհասանելի, սակայն նշված պատասխանները պահպանվում են և ենթակա են ստուգման:
- Հարթակում աշխատելիս խիստ ցանկալի է չծանրաբեռնել տան համացանցային կապը՝ այլ սարքերով տեսանյութ դիտելով, առցանց խաղերով կամ մեծածավալ նյութեր բեռնելով: Հնարավոր խափանումներից խուսափելու համար մրցույթին մասնակցելու 75 րոպեի ընթացքում համացանցը (ինտերնետ) տրամադրեք միայն հարթակի օգտագործմանը:

CONTESTS' LAB

(096) 86 – 80 - 11
էլ. փոստ՝ kangaroo@contests.am